Պատրաստի ծեփամածիկ R

Նկարագրություն

- Սպիտակ
- Հանքային
- Էկոլոգիապես մաքուր և անվտանգ

Բաղադրություն

Կալցիումի կարբոնատ, մոդիֆիկացնող հավելանյութեր, պոլիմերային դիսպերսիա, պլաստիկարարներ:

Նշանակություն

Պատրաստի ծեփամածիկը նախատեսված է ներկարարական աշխատանքներից առաջ չդեֆորմացվող շինարարական չոր մակերեսների (գիպսային, կրային, ցեմենտակրային) վերջնահարդարման համար:

Մակերեսի նախապատրաստում

- Նախքան պատրաստի ծեփամածիկի քսելը, հեռացնել հիմքի թույլ հատվածները
- Մաքրել մակերեսը կեղտից, փոշուց, յուղի և ներկի հետքերից:
- Ներծծող մակերեսներն անհրաժեշտ է մշակել «ՇԵՆ» ֆիրմայի ակրիլային կոնցենտրատով
- Նվազագույնը 4 ժամ անց քսել պատրաստի ծեփամածիկը

Օգտագործում

- Անհրաժեշտ է մինչև աշխատանքները սկսելը պատրաստի ծեփամածիկը խառնել:
- Պատրաստի ծեփամածիկը մակերեսին քսել չժանգոտվող մածկաթիակով:
- Հարթ մակերես ստանալու համար չորանալուց հետո կատարել մակերեսի հղկում:
- Աշխատանքը կատարելուց հետո գործիքները լվանալ, իսկ օգտագործված տարաները և շաղախի մնացորդներն աղբահանել սահմանված կարգով:
- Շաղախի արագ չորացման համար ապահովել տարածքի օդափոխությունը:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	+10°C-ից +30°C
Շերտի հաստություն	0,1 -0,5 մմ
Քսված շերտի կծկումը	ոչ ավել քան 0,4մմ/մ
Պատրաստի ծեփամածիկի օգտագործման ջերմաստիճանը	+10°C-ից +30°C
Պատրաստի ծեփամածիկի ծախսը 1մ^2 համար (Ծեփամածիկի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսից և նրա հարթության աստիճանից:	0,16 կգ - 0.8 կգ

Փաթեթավորում

1 կգ, 4 կգ, 8կգ և 15 կգ տարաներ

Պահպանում

Պահել +5°C-ից +30°C ջերմաստիճանային պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 12 ամիս:

Անվտանգության կանոններ

- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում աչքը լվանալ մաքուր ջրով, անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

Ուշադրություն

- Չի թույլատրվում ջուր կամ այլ քիմիական հավելանյութեր ավելացնել, քանի որ դա կհանգեցնի խառնուրդի կպչողունակության նվազմանը և կնպաստի ճաքերի առաջացմանը:
- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների իրականացման հրահանգների խախտմամբ աշխատելու դեպքում: